ուրա-գիւղացիական «Նոյեմբերեան յեղափոխութեան»:

Բոլշեւիկեան ըէժիմը հանդուրժելի չէ Հայաստանի եւ հայ ժողովուրդի համար ոչ միայն այն տեսակէտից, որ նա կապտել է մեր ժողովուրդի քաղաքական եւ քաղաքացիական ազատութիւնը, կաշկանդել նրա տնտեսական վերելքը, այլ եւ այն տեսակէտից, որ նա, անազատ վիճակ ստեղծելով մեր երկրում, անդամալուծել, անկարելի է դարձրել մեր երկրի ու ժողովուրդի համար ոչ պակաս կարեւորութիւն ունեցող ազգահաւաքման հրամայական պահանջը, որի սկիզբը դրուած էր, լայն չափերով, ազգային-հանրապետական կառավարութեան օրով:

Կարճ, եթէ դիքտատուրայի տապալումը եւ դեմոկրատական-ազատ կարգերի վերականգնումը կենսական անհրաժեշտութիւն է ռուս եւ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների համար, նա կրկնակի պահանջ է հայ ժողովուրդի համար: Ազատութեան պայքարը աւելի քան ուրիշ տեղ՝ Հայաստանում կարող է գտնել իր սկզբունքային արդարացումը:

Ահա թէ ինչո՛ւ այնչափ ժողովրդականութիւն ունեցաւ փետրուարեան ապստամբութիւնը Հայաստանում, որ միահամուռ բընկումով վերջ տուաւ, թէեւ կարճ ժամանակով, տիրող դիքտատուրային, վատթարագոյն ձեւի տակ: Իսկապէս սխալ էլ է՝ փետրուարեան պատմական անցքերը «ապստամբութիւն» որակելը, ինչ որ սովորաբար արւում է մեզնում, քանի որ նրանք, այդ դէպքերը, ըստ ամենայնի ի յայտ են բերել բոլոր յեղափոխութիւններին յատուկ հիմնական գծերը: Աւելի ճշմարիտ է խօսել ուրեմն ոչ թէ փետրուարեան ապստամբութեան, այլ փետրուարեան յեղափոխութեան մասին:

Եւ սակայն եթէ յեղափոխութեան, ազատ ապրելու պահանջը անկապտելի իրաւունքն է ամէն մի ժողովուրդի, այդ դեռ չէ նշանակում թէ նաեւ նրա պարտականութիւնն է՝ կիրարկել այն բոլոր պայմաններում: Նա մի երկայրի սուր է, որ հեշտութեամբ կարող է իր իսկ՝ կրողի դէմ դառնալ եւ նրան վնասել, փոխանակ շահ բերելու նրա գործին: Ուրիշ խօսքով՝ ամէն մի յեղափոխական քայլ կարող է արկածախնդրականի վերածուել, եթէ չէ հասունցած նա ըստ ամենայնի, եթէ չէ ապահովուած նրա յաղթանակը:

Խորհրդային դիքտատուրան տապալելը եւ նրան դեմոկրատականով փոխարինելը ոչ սոսկ Հայաստանի եւ հայ ժողովուրդի գործն է, ոչ էլ նրա ոյժերի համապատասխան մի ձեռնարկ: Դա նախ եւ առաջ ռուս մեծ ժողովուրդի գործն է, որ եւ իրականութիւն դառնալ կարող է միայն այն ժամանակ, երբ համառուսական չափանիշով հասունցած լինի նա եւ ապահովուած նրա յաղթանակը — յեղափոխութեամբ թէ բարեշրջութեամբ, դա տարբեր խնդիր է:

Անկարելի է կարծել, թէ հնարաւոր է առհասարակ, որ Հայաստանում կամ Կովկասում ազատ, դեմոկրատական կարգեր իշխեն, մինչ անդին Ռուսաստանում չարունակի փթթել դիքտատուրան:

Եւ վերջապէս հայ ժողովուրդը եւ ոչ իսկ մէկ կաթիլ արիւն տրամադրել կարող է մի դատի համար, որչափ եւ արդար լինի նա ու նաեւ իրենը, եթէ միայն՝ զէնքի պայքարը չէ բռնադատուած նրան տիրող իշխանութեան կողմից, ինչ որ եղաւ 1920 փետրուարին, եւ եթէ դրանից դուրս ուրիշ ելք չէ մնում: Ու պատմութեան առաջ միայն եւ միայն այդ տեսակէտից հիմնաւորուել ու արդարանալ կարող է ամէն մի յեղափոխութիւն առհասարակ, դրանց թւում ուրեմն նաեւ հայկականը եւ մասնաւորապէս փետրուարեանը:

Ահա թէ ինչո՛ւ Ռուսաստանի ժողովուրդների համար ընդհանրապէս եւ մեզ համար մասնաւորապէս — կան նաեւ ուրիշ պատճառներ — անբաղդատելիօրէն ցանկալի, դերադասելի է, որ բարեշրջման ճանապարհով տեղի ունենայ Խորհ. Միութեան մէջ փոխանցումը — որչափ եւ երկարաձգուի նա — դիքտատուրայից դէպի դեմոկրատիա:

Ահա թէ ինչո՛ւ Հ. Յ. Դաշնակցութիւնն էլ ստեղծուած պայմաններում, մնալով հանդերձ պայքարողի դերում դաղափարական դեռնի վրայ ընդդէմ բոլշեւիզմի, ժխտում է յեղափոխական գործօն կռուի կարգախօսը՝ տիրող ըէժիմի դէմ:

Եւ որովհետեւ ազատութեան վերստացումը ոչ միայն հայ, այլ եւ ռուս եւ Ռուսաստա-